



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 485- Ա

02 օգոստոսի 2019 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի N 197-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի» 1-ին և 11-րդ գլխի պահանջները

որոշում եմ՝

1. Հայտարարել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համար բաց մրցույթները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին:

02.08.2019



ՄԱՐԶՊԵՏ

ԿՈՍՅԱՆ GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի
2019թ. օգոստոս 2-ի
N 485-Ա որոշման

ՀՀ Գեղարքունիքի մարզի պետական ոչ առևտրային կազմակերպությունների
տնօրենների թափուր պաշտոնների համար բաց
մրցույթների ժամանակացույց

- | | |
|--------------------------|---|
| 1.<<Վաղաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ | 2019թ. հոկտեմբերի 15-ին, ժամը՝ 11 ⁰⁰ -ին |
| 2.<<Ծակքարի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ | 2019թ. հոկտեմբերի 16-ին, ժամը՝ 11 ⁰⁰ -ին |
| 3.<<Ծովագյուղի ԲԱ>> ՊՈԱԿ | 2019թ. հոկտեմբերի 17-ին, ժամը՝ 11 ⁰⁰ -ին |
| 4.<<Լճաշենի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ | 2019թ. հոկտեմբերի 18-ին, ժամը՝ 11 ⁰⁰ -ին |
| 5.<<Վարդենիկի ԱԿ>> ՊՈԱԿ | 2019թ. հոկտեմբերի 22-ին, ժամը՝ 11 ⁰⁰ -ին |

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԽԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՓՈԽԱՐԿ



ԱԼԲԵՐՏ ԱՂԵԿՅԱՆ